ՀՀ ԿԳՄՍ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԲԸՄ 120 ՏԱՐԻ

ՓՈԽԸՄԲՌՆՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ԵՎ

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹՅՈՒՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ (ՀԱՅԱՍՏԱՆ)-Ի

ՄԻՋԵՎ

Սույն Փոխըմբռնման հուշագիրը (այսուհետ՝ Հուշագիր) կնքվում է **Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության** (այսուհետ՝ նախարարության)՝ ի դեմս նախարարի տեղակալ Արաքսիա Սվաջյանի և **Հայկական բարեգործական ընդհանուր միություն հիմնադրամ (Հայաստան)-ի** (այսուհետ՝ Հիմնադրամ)՝ ի դեմս գլխավոր տնօրեն Վասկեն Յակուբյանի միջև, հետայսու՝ «Կողմեր», իսկ յուրաքանչյուրն առանձին նաև՝ «Կողմ»,

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼՈՎ, ՈՐ

- Նախարարությունը ցանկանում է վերապատրաստել «Թվային գրագիտություն և համակարգչային գիտություն» առարկան դասավանդող ուսուցիչներին (այսուհետ՝ Ուսուցիչներ)՝ իրականացնելով համապատասխան ծրագիր (այսուհետ՝ Ծրագիր),

- Հիմնադրամի հիմնական նպատակներից է հայ ժողովրդի կրթական զարգացմանն ամենուրեք խթանելը՝ բարեգործական ծրագրերի իրականացման միջոցով,

- Հիմնադրամը պատրաստակամ է Ուսուցիչներին զինել տեղեկատվական տեխնոլոգիաների և թվային գրագիտության վերաբերյալ տեսական և գործնական հիմնարար գիտելիքներով՝ իր կողմից իրականացվող ՀԲԸՄ «ՏեխնՈՒս» ծրագրի շրջանակներում,

- Ծրագրի իրականացումը կնպաստի համակարգչային գիտության ոլորտում աշակերտների բարձրորակ կրթություն ստանալուն և ապագայի համար կիրառելի հմտություններ ձեռք բերելուն,

- Կողմերը ցանկանում են համագործակցել կրթական ծրագրեր համատեղ իրականացման շուրջ,

ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ, որ Կողմերն ընդունում են յուրաքանչյուր Կողմի անկախությունը՝ կնքում են սույն Հուշագիրը փոխադարձ վստահության, հարգանքի և փոխադարձ պատասխանատվության ոգով,

ԿՈՂՄԵՐԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒՄ ԵՆ ՀԵՏԵՎՅԱԼԻ ՇՈՒՐՋ.

Հոդված 1
Հուշագրի նպատակը

Սույն Հուշագրի նպատակն է համագործակցության շրջանակում իրականացնել Ուսուցիչների (Երևանից և ՀՀ մարզերից) անհատույց վերապատրաստում:

Հոդված 2
Կողմերի համագործակցության շրջանակը

2.1 Սույն Հուշագրի շրջանակներում Հիմնադրամը պատրաստակամ է՝

2.1.1 Ապահովել Ուսուցիչների (Երևանից և ՀՀ մարզերից) անհատույց վերապատրաստումը հիբրիդային ձևաչափով (առկա և հեռավար).

2.1.2 Ուսուցիչների կարիքների գնահատման արդյունքում կազմակերպել սփյուռքի մասնագետների հետ մասնագիտական մենթորության հանդիպումներ.

2.1.3 Մասնակցել Ծրագրի շահագրգիռ կողմերի հետ հանդիպումներին.

2.1.4 Մասնակցել Կողմերի կողմից իրականացվող կրթական այլ ծրագրերին, դրանց շրջանակներում կազմակերպված միջոցառումներին.

2.2 Սույն Հուշագրի շրջանակներում Նախարարությունը պատրաստակամ է՝

2.2.1 Ապահովել Ծրագրի բովանդակության փորձաքննությունն ու հաստատումը.

2.2.2 Ուղարկել շրջաբերականներ Ծրագրի վերաբերյալ հանրակրթական ուսումնական հաստատություններին.

2.2.3 Մասնակցել Ծրագրի շահագրգիռ կողմերի հետ հանդիպումներին.

2.2.4 Ապահովել Ծրագրի և դրա շրջանակներում կազմակերպվող միջոցառումների հանրայնացումը.
2.2.5 Համակարգել Ծրագրի արդյունքների հաբաքագրումը:

2.3 Կողմերը պատրաստակամություն են հայտնում միմյանց տրամադրել համագործակցության շրջանակներում անհրաժեշտ տեղեկատվությունը և փաստաթղթերը:
2.4 Կողմերից յուրաքանչյուրը պատասխանատվություն է կրում իր գործողությունների և բացթողումների համար՝ կապված սույն Հուշագրի շրջանակում իրականացվող աշխատանքների հետ:
2.5 Կողմերն ըստ անհրաժեշտության հանդիպում են՝ Հուշագրի շրջանակում իրականացվող աշխատանքների առաջընթացի և արդյունքների գնահատման ու հետագա աշխատանքների ծրագրման նպատակով:
2.6 Կողմերն ազատ են Հուշագրի առարկայի վերաբերյալ համաձայնագրեր և հուշագրեր կնքել ցանկացած այլ հաստատության և (կամ) կազմակերպության հետ:

Հոդված 3
Կողմերի իրավասության շրջանակը

3.1 Սույն Հուշագրում ոչինչ չի կարող կազմել կամ մեկնաբանվել որպես Կողմերից մեկի կողմից սույն Հուշագրում նշված կամ դրան համապատասխան որևէ միջոցառում կամ Ծրագիր ամբողջությամբ կամ մասնակիորեն ֆինանսավորելու առաջարկ, խոստում կամ պարտավորություն:
3.2 Ցանկացած պարտավորություն պետք է արտացոլված լինի Կողմերի միջև կնքվող համաձայնագրերում:
3.1 Պարտավորություններն ու համաձայնագրերը ենթակա են Կողմերի կողմից հաստատման և կարգավորվում են դրանց քաղաքականություններով ու ընթացակարգերով:
3.1 Սույն Հուշագիրը չի ենթադրում Կողմերից մեկի կողմից սույն Հուշագրի շրջանակներում կամ այլ հիմքերով մյուս Կողմի նկատմամբ որևէ հարցում արտոնյալ վերաբերմունք ցուցաբերելու որևէ պարտավորություն:

Հոդված 4

Ծանուցումներ

4.1. Սույն Հուշագրի շրջանակներում կատարվող ցանկացած ծանուցում կամ այլ հողորդակցություն հասցեագրվում և ուղղվում է ստորև նշված հասցեներով կամ Կողմերից մեկի ծանուցմամբ մյուս Կողմին հայտնված այլ հասցեներով:

ՀԻՄՆԱԴՐԱՄ՝
Ում՝ Վասկեն Յակուբյան
Էլ. փոստ՝ vaskeny@agbu.am
agbuarm@agbu.am

ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Ում՝ Արաքսիա Սվաջյան
Էլ. փոստ՝ araksia.svajyan@escs.am
secretariat@escs.am

4.2. Կողմերից յուրաքանչյուրը մյուս Կողմին այդ մասին գրավոր ծանուցելու միջոցով կարող է նշանակել լրացուցիչ ներկայացուցիչներ կամ այլ ներկայացուցիչներին փոխարինել սույն հոդվածում նշված անձանցով:

Հոդված 5
Հրապարակայնություն և տեսանելիություն

5.1 Կողմերի անվանման կամ լոգոյի օգտագործումը թույլատրվում է Կողմերի համաձայնությամբ՝ գրավոր հաստատմամբ:
5.2 Կողմերն ապահովում են իրենց անվանման և (կամ) լոգոյի պատշաճ տեսանելիությունը բոլոր հաղորդակցական նյութերում, միջոցառումներում և հաշվետվություններում, որոնք առնչվում են սույն Հուշագրով սահմանված Ծրագրին: Տեղեկատվության հրապարակման ձևերն ու ծավալը Կողմերը համաձայնեցնում են առանձին՝ ներառյալ մամուլի հաղորդագրություններում, սոցիալական մեդիայի հրապարակումներում, շնորհակալագրերում և այլ հաղորդակցության նյութերում հիշատակման կարգը:

Հոդված 6

Եզրափակիչ դրույթներ

6.1. Սույն Հուշագրում ոչինչ չի սահմանափակում դրանով նախատեսված որևէ միջոցառման, ծրագրի կամ համագործակցության ոլորտի շուրջ այլ կողմերի հետ հուշագրեր կամ համաձայնագրեր կնքելու Կողմերի իրավունքը կամ չի խոչընդոտում վերջիններիս կողմից նման քայլերի կատարումը:

6.2. Սույն Հուշագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման օրվանից: Հուշագրի գործողությունը կարող է դադարեցվել ցանկացած Կողմի նախաձեռնությամբ՝ այդ մասին մյուս Կողմին գրավոր ծանուցում ուղղելու միջոցով:

6.3. Սույն Հուշագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ գրավոր համաձայնությամբ:

6.4. Սույն Հուշագրի որևէ դրույթի մեկնաբանումից կամ կիրարկումից ծագող ցանկացած վեճ կարգավորվում է բարեկամաբար՝ խորհրդակցությունների միջոցով:

Ի ՀԱՎԱՍՏՈՒՄՆ ԻՆՉԻ, Կողմերը, Հուշագիրը ստորագրեցին Երևանում 2026 թվականի մայիսի 12-ին հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող երկու բնօրինակից՝ հայերեն:

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ՝

Արաքսիա Սվաջյան
Նախարարի տեղակալ

Ամսաթիվ 12.05.2026թ.

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹՅՈՒՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ (ՀԱՅԱՍՏԱՆ)-Ի ԿՈՂՄԻՑ՝

Վասկեն Յակուբյան
Գլխավոր տնօրեն

Ամսաթիվ 12.05.2026թ.